ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՐԳՈՂ, ՊԱՐՈՂ և ԼՈՒՍԱՅԻՆ (ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ) ՇԱՏՐՎԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «*ՀՀ ԼՄՎՔ-ԵՓՄ- 19/01-1*»

ք. Վանաձոր «16» հուլիսի 2019թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱՆՏԵԽՄԱՏ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Հարություն Մելիքյան--ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր Համայնքի Հայքի հրապարակում երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների տեղադրման
Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայնագրի կնքման օրվանից 90 օրացուցային օր:
աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օր** (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.
4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.
5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **150 000 000** (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 25 000 000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 45 000 000 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[32] :

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման

---

[32] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[33] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[37] :

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ

---

[37] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[34] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[38]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան	«ՎԱՆՏԵԽՄԱՏ» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22	ք. Վանաձոր, Սպանդարյան 59/1
Կենտրոնական գանձապետարան	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 900232798018	Հ/Հ 163138455585
ՀՎՀՀ 06901936	ՀՎՀՀ 06956941
----------Մ. Ասլանյան	----------Հ. Մելիքյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[38] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« 16 » հուլիսի 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ-ԵՓՄ- 19/01-1» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՐԳՈՂ, ՊԱՐՈՂ և ԼՈՒՍԱՅԻՆ (ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ) ՇԱՏՐՎԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N/N	Գնի հիմքը	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ, դրամ	
					Միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6	7
1		Մետաղական խողովակների ապամոնտաժում	մ	285,00	0,500	142,500
2		Մետաղական խողովակների բարձում և բեռնաթափում	տն	1,39	10,000	13,900
		-	-	-		
3		Մետաղական խողովակների տեղափոխում ավտոինքնաթա-փով մինչև 10կմ հեռ.	տն	1,39	21,582	30,000
		-	-	-		
4		Բազալտե սալիկներով ծածկույթի քանդում	$մ^2$	95,00	2,500	237,500
		-	-	-		
5		Քարե պատերի քանդում և ժալյուզների տեղադրում	հատ	2,00	20,000	40,000
		-	-	-		
6		Անցքերի բացում քարե պատերում	հատ	6,00	25,000	150,000
		-	-	-		

7		3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	մ^3	50,00	2,500	125,000
		-	-	-		
8		Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում և տեղափոխում	մ^3	12,00	3,300	39,600
		-	-	-		
9		3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով մետաղական սյուների հիմքերի համար	տեղ	5,000	5,000	25,000
		-	-	-		
10		Բազալտե սալիկներով ծածկույթի կառուցման համար խճի նախաշերտի կառուցում /10սմ հաստ/	մ^3	9,500	8,400	79,800
		-	-	-		
11		Բազալտե սալիկներով ծածկույթի կառուցման համար բետոնե նախաշերտի կառուցում B 12.5 մ.բ /10սմ հաստ/	մ^3	9,500	32,800	311,600
		-	-	-		
12		Ցեմ./ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 3սմ հաստ.	մ^2	95,000	1,150	109,250
		-	-	-		
13		Բազալտե սալիկներով ծածկույթի կառուցում 4սմ հաստ	մ^2	95,000	10,400	988,000
		-	-	-		
		-	-	-		
14		Հենասյունների հիմքերի բետոնացում B 12.5 մ.բ.	մ^3	1,000	47,000	47,000
15		Պողպատե հենասյան մոնտաժում /Φ101x3 L=3,9մ, 4 հատ/	հատ	4,000	10,000	40,000
16		Պողպատե խողովակ Φ101x3	մ	15,60	3,200	49,920
17		Պողպատե թիթեղ 3մմ հաստ	մ^2	0,10	10,800	1,080
18		Ամրան Φ12A500c	տն	0,004	360,000	1,440
19		Մետաղական հարթակի կառուցում	հատ	4,00	7,500	30,000
		-	-	-		
20		Մետաղական անկյունակ L40x3	մ	9,60	1,200	11,520

21		Պողպատե թիթեղ 3մմ հաստ	մ^2	0,81	12,000	9,720
		-	-	-		
22		Լազերային էֆեկտի համար պողպատե խողովակի տեղադրում/Φ127x5 L=4մ, 1 հատ/	հատ	1,00	10,000	10,000
		-	-	-		
23		Պողպատե խողովակ Φ127x5	մ	4,00	3,200	12,800
24		Պողպատե թիթեղ 3մմ հաստ	մ^2	0,04	10,800	0,432
25		Ամրան Φ12A500c	տն	0,001	360,000	0,360
		-	-	-		
26		Լազերային էֆեկտի համար պողպատե խողովակի տեղադրում/Φ114x5 L=10մ, 1 հատ/	հատ	1,00	20,000	20,000
		-	-	-		
27		Պողպատե խողովակ Φ114x5	մ	10,00	3,200	32,000
		-	-	-		
28		Մետաղական էլեմենտների յուղաներկում 2անգամ	մ^2	15,00	1,200	18,000
		-	-	-		
29		Պղնձե ջիղերով մալուխի տեղադրում 2,5x2 մմ^2	մ	330,00	0,350	115,500
		-	-	-		
30		Մալուխի համար տրոս	մ	160,00	0,400	64,000
		-	-	-		
31		Պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում հողի մեջ Φ50,63	մ	166,00	0,290	73,950
32		Պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում հողի մեջ Φ110	մ	35,00	0,500	17,500
		Ընդամենը				**2847,372**

Երգող երաժշտական շատրվանների նախահաշիվ								ՀՀ դրամ /հազար դր./	
Հ/Հ	Անվանում	Բնութագիր	Չափ միավոր	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	Նյութը	Ծագումը	Նկարը
1	Կենտրոնական ուղիղ ծայրափողակ	Տրամագիծ 65մմ	հատ	1	179,937	179,937	S.S.304	Sea Fountain	
2	Կլոր պտտվող ծայրափողակ	Տրամագիծ 25մմ	հատ	32	12,392	396,544	S.S.304	Sea Fountain	
3	Շատրվանի վազող գլխադիր	Տրամագիծ 25մմ	հատ	40	12,392	495,680	S.S.304	Sea Fountain	custom made

4	շրջադարձվող ծայրափող	Տրամագիծ 25մմ	հատ	12	48,578	582,936	S.S.304	Sea Fountain	
5	Ծիածանաձև գլխադիր	Տրամագիծ 50մմ	հատ	4	35,690	142,760	S.S.304	Sea Fountain	
6	Ուղիղ ծայրափող	Տրամագիծ 65մմ	հատ	1	99,140	99,140	S.S.304	Sea Fountain	
7	Ուղիղ ծայրափող	Տրամագիծ 25մմ	հատ	32	12,392	396,544	S.S.304	Sea Fountain	

8	Շատրվանի վազող գլխադիր	Տրամագիծ 25մմ	հատ	40	12,392	495,680	S.S.304	Sea Fountain	custom made
9	Ուղիղ ծայրափող (Սիրամարգ)	Տրամագիծ 25մմ	հատ	39	12,392	483,288	S.S.304	Sea Fountain	
10	Ուղիղ ծայրափող (կենդանի)	Տրամագիծ 25մմ	հատ	26	12,392	322,192	S.S.304	Sea Fountain	
11	Ուղիղ ծայրափող (ճայ)	Տրամագիծ 25մմ	հատ	40	12,392	495,680	S.S.304	Sea Fountain	

12	Կլոր պտտվող ծայրափողակ		լրակազմ	1	721,237	721,237	S.S.304	Sea Fountain	
13	Ճոճվող գլխադիր (Ճայ)		լրակազմ	2	270,155	540,310	S.S.304	Sea Fountain	
14	Ներքևից լուսավորման լամպ		հատ	241	2,974	716,734	S.S.304	Sea Fountain	
15	Անջրաթափանց ժապավեն, PPC		հատ	80	4,461	356,880			

16					**Ընդամենը**	**6425,542**			
17	Ճժանգոտվող պողպատե խողովակ	Տրամագիծ 100մմ	մ	188	31,229	5871,052	S.S.304	FoShan	
18		Տրամագիծ 25մմ	մ	131	7,435	973,985	S.S.304	FoShan	
19		Տրամագիծ 40մմ		50	12,392	619,600	S.S.304	FoShan	
20					**Ընդամենը**	**7464,637**			
21	Փական	Տրամագիծ 25մմ	հատ	109	13,384	1458,856	S.S.304	ZHENGBANG	
22	Փական	Տրամագիծ 40մմ	հատ	14	17,845	249,830	S.S.304	ZHENGBANG	
23	Էլեկտրական փական	Տրամագիծ 25մմ	հատ	80	26,767	2141,360	coppery		

24					Ընդամենը	3850.046			
25	6SP60-3-5.5KW	Շատրվանի պոմպ	լրակազմ	1	589,382	589,382	S.S.304	LISHIBA	
26	SP60-2-4KW	Շատրվանի պոմպ	լրակազմ	6	526,429	3158,574	S.S.304	LISHIBA	
27	SP60-1-2.2KW	Շատրվանի պոմպ	լրակազմ	11	435,716	4792,876	S.S.304	LISHIBA	
28	Ստորջրյա շարժիչ ռեդուկտորով 1.1KW	Հատուկ նշանակության	լրակազմ	3	450,588	1351,764	պողպատ		
29					ընդամենը	9892,596			
30	Երաժշտական սարքավորումներ		լրակազմ	1	Ընդամենը	4057,271			



31	**Սարքավորումներ ի ցանկ**								
32	Երաժշտական բարձրախոս	800W	լրակազմ	4				Չինաստան	
33	Ուժեղացուցչի համակարգ		լրակազմ	2				Չինաստան	
34	Սնման սեկվենսոր		լրակազմ	1				Չինաստան	
35	Երաժշտական բաշխիչ		լրակազմ	1				Չինաստան	
36	Երաժշտական խառնիչ (Միքշեր)		լրակազմ	1				Չինաստան	
37									

38	Կցաշուրթ	S.S.304	հատ	49	26,768	1311,632	S.S.304	Sea Fountain	
39	Չժանգոտվող նյութից լամպ (12w)		հատ	241	35,690	8601,290	S.S.304	Sea Fountain	
40	Ջրի ռեզերվուար		հատ	6	179,937	1079,622	S.S.304	Sea Fountain	
41	Փոխակերպիչ 7.5KW		հատ	2	495,696	991,392	SANKEN	SANKEN	
42	Փոխակերպիչ 4KW		հատ	1	319,723	319,723	SANKEN	SANKEN	
43	Փոխակերպիչ 11KW		հատ	1	563,111	563,111	SANKEN	SANKEN	

44	Ղեկավարման վահանակ		հատ	2	4508,355	9016,710		Sea Fountain	
45	Համակարգիչ մուլտիմեդիա ծրագրերով		լրակազմ	1	3833,130	3833,130			
46					**ընդամենը**	**25716,610**			
47	ԸՆԴԱՄԵՆԸ	60254.073							
48	Պարագաներ	Չժանգոտվող նյութերից մանեկ, հեղույս, լամպ, պոմպ և այլն					3%	1920,341	
49	Ղեկավարման ծախսեր						8%	5120,908	
50	Մալուխ (ջրավազանի մեջ)	3*2.5+1	գլանափաթեթ	6	162,092	972,552	**6604,653**	WuXi	

51		3*6+1	գլանափաթեթ	1	360,371	360,371		WuXi	
52		3*4+1	գլանափաթեթ	3	241,404	724,212		WuXi	
53		3*1.5	գլանափաթեթ	2	98,148	196,296		WuXi	
54		2*2.5	գլանափաթեթ	2	119,463	238,926		WuXi	
55		4*1	գլանափաթեթ	16	88,234	1411,744		WuXi	
56		3*2.5+1*4	գլանափաթեթ	12	225,046	2700,552		WuXi	
57	Տեղադրում	10%		6401,136	Արժեքը	0%	0		
58	Կարգաբերում	0%		0	Ծախսերը		727		
59	Հարկեր	0%		0	Շանհայից		818		
60	Շատրվանների ընդհանուր արժեքը	80301.112							

	Լազերային սարքավորումներ						
հհ	անվանում	քանակ	միավորի գին	ընդհանուր արժեք	Ծագումը		

1	Գունավոր լազեր 10W	1	10000,000		10000,000			
	Ընդհանուր արժեք				90301,111			

Երգող-պարող շատրվանի նախահաշիվ

h/h	Անվանում	չափման միավոր	քանակ	միավորի արժեք	Ընդհանուր	Նյութը	Ծագումը	
1	Կրակի և ջրի ծայրափողակներ	հատ	2	1262,042	2524,084	Չժանգոտվող պողպատ	seafountain	
2	Օդի խողովակ	մետր	160	6,444	1031,040		seafountain	
3	Հաղորդալար 3*2.5+1	գլանափաթեթ	2	162,092	324,184		seafountain	

4	Հազորդալար 2*1	գլանափաթեթ	2	54,526	109,052		seafountain	
5	2.2KW ջրի պոմպsp60-1-2.2kw	լրակազմ	2	435,717	871,434		LISHIBA	
6	Ինվերտոր	լրակազմ	2	403,316	806,632	GGD	seafountain	
7	Ղեկավարման վահանակ	լրակազմ	1	2163,713	925.755	GGD	seafountain	
8	packing fee:				365			
Ընդամենը					6 592 ,181			
	Բոլոր լամպերի փոխարինում DMX512 LAMP COST				2 500 ,000			

	Ամբողջը/ երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվաններ և շատրվաններ ի տեղադրման *աշխատանքներ/*	99 393,293
	Վերադիր ծախսեր 13,3%	13 219,308
	Ընդամենը	112 612,601
	Շահույթ 11%	12 387,386
	Ընդամենը	124 999,987
	ԱԱՀ 20%	24 999,997
	Ամբողջը	150 000,000

* Կապալառուն աշխատանքները կատարում է **ք. Վանաձոր Հայքի հրապարակ** հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232798018
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎԱՆՏԵԽՄԱՏ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Սպանդարյան 59/1
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 163138455585
ՀՎՀՀ 06956941

----------Հ. Մելիքյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 16 » հուլիսի 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ-ԵՓՄ- 19/01-1» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՐԳՈՂ, ՊԱՐՈՂ և ԼՈՒՍԱՅԻՆ (ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ) ՇԱՏՐՎԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Շինարարական, ապամոնտաժման աշխատանքներ	Համաձայնագրի կնքման օրվանից	25.08.2019
2	Տեղադրման, մոնտաժման աշխատանքներ	26.08.2019	Պայմանագրի կատարման ժամկետի ավարտ՝ համաձայնագրի կնքման օրվանից 90 օրացուցային օր:
ԸՆԴԱՄԵՆԸ		**Համաձայնագրի կնքման օրվանից**	**90 օրացուցային օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232798018
ՀՎՀՀ 06901936

---------- Մ. Ապլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎԱՆՏԵԽՄԱՏ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Սպանդարյան 59/1
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 163138455585
ՀՎՀՀ 06956941

---------- Հ. Մելիքյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 16 » հուլիսի 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ-ԵՓՄ- 19/01-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 16 » հուլիսի 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ-ԵՓՄ- 19/01-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն